ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022թ. հուլիսի 9-13-ը Ռուսաստանի Դաշնություն կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Արմեն Արզումանյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա և ք. Կրասնոյարսկ, 2022թ. հուլիսի 9-ից 13-ը

4. Հրավիրող կողմը՝

ՌԴ այցը կազմակերպվել է ռուսական կողմից ստացված հրավերի հիման վրա

5. Գործուղման նպատակը՝

Մասնակցություն Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի միջև համագործակցության Միջխորհրդարանական հանձնաժողովի 35-րդ նիստին և Հանձնաժողովին կից գործող փորձագիտական խորհրդի աշխատանքային հանդիպմանը:

6. Քննարկված թեմաները՝

Հայ-ռուսական առևտրատնտեսական համագործակցության ոլորտին առնչվող հարցերի քննարկում, այդ թվում՝

- Հայաստանի և Ռուսաստանի համագործակցությունը Եվրասիական Տնտեսական Միության շրջանակներում, այդ թվում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման և թվայնացման տեմպերի արագացման գործընթացներին առնչվող հարցեր,
- ազգային համայնքների դերը՝ հայ-ռուսական տնտեսական, մշակութային և կրթական կապերի զարգացման գործում, ներառյալ՝ միջտարածաշրջանային փոխգործակցության ասպեկտները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի միջև համագործակցության միջխորհրդարանական հանձնաժողովի 35-րդ նիստը (Նիստ) կայացավ 2022թ. հուլիսի 11-ին, ք. Կրասնոյարսկում՝ ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Հակոբ Արշակյանի և ՌԴ ԴԺ Դաշնության խորհրդի նախագահի տեղակալ Յուրի Վորոբյովի նախագահությամբ:

Նիստի շրջանակներում կազմակերպված «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում Հայաստանի և Ռուսաստանի համագործակցության, այդ թվում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման և թվայնացման տեմպերի արագացման» խորագրի ներքո քննարկմանը ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արմեն Արզումանյանը հանդես եկավ ելույթով (կցվում է): Փոխնախարարն իր ելույթում անդրադարձավ ԵԱՏՄ փոխգործակցության հիմնական ուղղություններին, կարևորելով համապարփակ թվայնացման արագացման գործընթացի անհրաժեշտությունը և անցումը դեպի խելացի համակարգեր, էլեկտրոնային առևտրի հարթակների զարգացումը և արհեստական բանականության համակարգի ներդրումը: Պարոն Արզումանյանն անդրադարձավ թվային տեխնոլոգիաների ոլորտում ԵԱՏՄ համագործակցության շրջանակներում առկա խնդիրներին, այդ թվում՝ ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժի ապահովման, այդ գործընթացների հետ կապված խոչընդոտների, բացառությունների և սահմանափակումների վերացմանն ուղղված խնդիրներին: Փոխնախարարը հակիրճ ներկայացրեց Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում արձանագրված թվային ցուցանիշները, կարևորելով ԵԱՏՄ ինտեգրացիոն գործընթացի շրջանակներում ընդհանուր չափանիշների օգտագործմամբ սեփական թվային հարթակների և ենթակառուցվածքների զարգացումը: Բացի այդ, Նիստի շրջանակներում կողմերը քննարկեցին հայ-ռուսական տնտեսական համագործակցության զարգացման հետ կապված հարցերը, ինչպես նաև տնտեսական, մշակութային և կրթական երկկողմ կապերի զարգացման գործում սփյուռքի դերակատարությանը վերաբերող հարցեր:

8. Ստորագրությունը, ամսաթիվը՝

18.07.2022թ.